ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ ՆՈՐ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 9 ՇԵՆՔԻ ԲԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/3

ք. Մասիս « 19 » փետրվարի 2026թ.

Մասիս համայնքը, ի դեմս համայնքի ղեկավար Նորայր Հակոբյանի, որը գործում է համայնքի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ֆոլկ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Սևոյանի, <<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Սարգսյանի, և <<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Բանդուրյանի, որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և 29.01.2026թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մասիս քաղաքի Նոր թաղամաս թիվ 9 շենքի բակի բարեկարգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալատուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 70 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել 10 օրվա ընթացքում:Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնոյությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով , ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման,

ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման

կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **27 791 280 (քսանյոթ միլիոն յոթ հարյուր իննսունմեկ հազար երկու հարյուր ութսուն) ՀՀ դրամ**, որից 4 631 880 (չորս միլիոն վեց հարյուր երեսունմեկ հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

Ընդ որում, հիմք ընդունելով 29.01.2026թ. կնքված համատեղ գործունեության պայմանագիրը՝ կատարված և սահմանված կարգով ընդունված աշխատանքների դիմաց վճարումները կատարվելու են <<Ֆոլկ>> ՍՊ ընկերության՝ սույն պայմանագրում սահմանված հաշվի համարին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի ոչ պատշաճ՝	
1.1	կազմակերպում	0,2%
1.2	կահավորում	0,2%
2	Անվտանգության տեխնիկայի կանոնների չպահպանում	1.0%
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանում	0,2%

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա

պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 8 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1, N 5 և N 6 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Ֆոլկ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Ազատության 24/15
Բանկը Ֆասթ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2621977680191001
ՀՎՀՀ՝ 08253974

Գլխ. տնօրեն՝ ---------- Գ. Սաղոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔԾՆ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Կոմիտաս 5
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011379500100
ՀՎՀՀ 00200833

Տնօրեն՝ ---------- Ա. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Պարոնյան 21/4
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011554730100
ՀՎՀՀ 02917998

Տնօրեն՝ ---------- Հ. Բանդուրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 1
« 19 » փետրվարի 2026թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/3 ծածկագրով պայմանագրի

Ծավալաթերթ-նախահաշիվ

Մասիս քաղաքի Նոր թաղամաս թիվ 9 շենքի բակի բարեկարգման աշխատանքների կատարման

ՀՀ NN	Աշխատանքների և ծախսերի անվանումը Наименование работ	Չափ.միավ. Ед.изм	Քանակ количество	Արժեքը հազ դրամ Стоимость тыс.драм	
				Միավորի за единицу	Ընդհանուր Всего
1	2	3	4	5	6
1	Քանդման աշխատանքներ Разборные работы				
2	Բետոնե հիմնատակով եզրաքարերի քանդում Разборка бетонных бортовых камней 150*300мм	մ/м	440	1,19	523,94
3	Ասֆալտ-բետոնե ծածկույթների քանդում Разборка асфальтобетонного покрытия	խմ/куб.м	220	5,75	1 265,63
4	Ցեմենտ-բետոնե ծածկույթների քանդում Разборка бетонного слоя покрытия	խմ/куб.м	33	3,72	122,82
5	Հին լուսատուների ապամոնտաժում Демонтаж старых светильников	հատ/шт	5	3,67	18,36
6	Մետաղական բազրիքների քանդում Разборка металлических перил	մ/м	246	0,57	141,36
7	Մեկհարկանի ապորինի շինության քանդում Разборка одноэтажного здания (незаконное строение) 17x8.5x3=435 куб.м	խմ/куб.м	435	6,28	2 731,75
8	Մետաղական տաղավարի քանդում (2 հատ) разборка металлической беседки (2 шт.)	տ/т	0,9	86,13	77,51
9	Բեռնում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ Погрузка строительного мусора на автосамосвалы	տ/т	608	0,81	491,01
10	Շինարարական աղբի տեղափոխում մինչև 5կմ Отвозка строительного мусора на расстояние 5 км (320*1.9)	տ/т	608	2,24	1 363,91
11	Բեռնաթափում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ Выгрузка строительного мусора	տ/т	608	0,99	600,12

12	Վերանորոգման աշխատանքներ Восстановительные работы				
13	Գրունտի մշակում ձեռքով 4 կարգ գռ. բետոնե եզրաքարերի տակ Разработка грунта 4 гр. вручную под бетонные бортовые камни	խմ/куб.м	25	5,25	131,26
14	Նոր բետոնե եզրաքարերի տեղադրում 150*300մմ Установка новых бетонных бортовых камней 150*300мм	մ/м	346	7,50	2 594,76
15	Նոր բետոնե եզրաքարերի տեղադրում 80*200մմ Установка новых бетонных бортовых камней 80*200мм	մ/м	360	7,12	2 564,99
16	Նախապատրաստական շերտերի պատրաստում խճից Щебеночная подготовка толщ.100мм	խմ/куб.м	16,8	16,71	280,76
17	Նախապատրաստական և հարթեցնող շերտերի իրականացնում ցեմենտ-ավազից Устройство цементно-песчаного подстилающего слоя	խմ/куб.м	8,4	25,37	213,15
18	Մայթերի իրականացնում բետոնե սալերից, կարանների լցումով ավազով Устройство бетонных плит Томет с заполнением швов песком (7.2 кв.м - для беседки)	քմ/кв.м	167,5	7,37	1 234,98
19	Հիմնատակի իրականացնում բազալտե խճից 12սմ հաստ. մայթերի տակ (սալվածքի համար) Устройство оснований из щебня под асфальтобетонное покрытие толщ .12см (для отмостки)	քմ/кв.м	310	1,70	528,06
20	Յուրաքանչյուր 1սմ շերտի հաստության փոփոխման համար պակասացնել կ.173 Исключить толщ.слоя на 2 см	քմ/кв.м	-310	0,17	-52,49
21	Մանրահատիկ ասֆալտբետոնե սալվածքի իրականացում (շենքերի պարագծով) 40մմ հաստ. Устройство асфальтобетонных покрытий дорожек и тротуаров толщ.40мм (вокруг зданий)	քմ/кв.м	310	3,42	1 059,36
22	Յուրաքանչյուր 0,5սմ շերտի հաստության փոփոխման համար ավելացնել կ.169 Добавить на последующие 1 см	քմ/кв.м	310	1,08	335,40
23	Հիմնատակի իրականացնում բազալտե խճից 15սմ հաստ. փոզոցում Устройство оснований из щебня под асфальтобетонное покрытие толщ .15см на дороге	քմ/кв.м	936	1,79	1 670,94
24	Յուրաքանչյուր 1սմ շերտի հաստության փոփոխման համար պակասացնել կ. 42- ին Уменьшить на 5 см	քմ/кв.м	-936	0,36	-334,34

25	Խոշորահատիկ ասֆալտբետոնե խառնուրդից ծածկույթի իրականացնում 4սմ հաստ. Устройство асфальтобетонных покрытий из крупнозернистой смеси толщ. 4 см	քմ/кв.м	936	4,04	3 783,94
26	Մանրահատիկ ասֆալտբետոնե խառնուրդից ծածկույթի իրականացնում 4սմ հաստ. Устройство асфальтобетонных покрытий из мелкозернистой смеси толщ. 4 см	քմ/кв.м	936	4,27	3 992,52
27	Գրունտի մշակում ձեռքով 4 կարգ գռ. նոր տեղադրվոհ խաղերի հինքերի տակ Разработка грунта 4 гр. вручную под установку новых детских игр	խմ/куб.м	2,2	5,25	11,55
28	Նախապատրաստական շերտերի պատրաստում խճից Щебеночная подготовка толщ.100мм	խմ/куб.м	0,135	16,71	2,26
29	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում Заливка ям бетоном М-200	խմ/куб.м	0,675	48,52	32,75
30	Նոր սղարանի տեհադրում Установка детских игр (горки)	հատ/шт	1	251,61	251,61
31	Նոր հորիզոնական ճոճանակի տեհադրում Установка детских игр (горизонтальные качели)	հատ/шт	1	117,32	117,32
32	Նոր ուղղագից ճոճանակի տեհադրում Установка детских игр (вертикальные качели)	հատ/шт	1	199,39	199,39
33	Նոր պտուտաձողի տեհադրում Установка турника	հատ/шт	1	564,95	564,95
34	Գրունտի խտացում խիճով Уплотнение грунта щебнем	քմ/кв.м	75	0,35	25,90
35	Խաղահրապարակում նախապատրաստական շերտ B20 (M-250) բետոնից ռետինե հատակի տակ 10սմ հաստ. Бетонный подготовительный слой на детской игровой площадке под резиновое покрытие из бетона B20 (M-250) толщ.10см	խմ/куб.м	7,5	65,84	493,83
36	Խաղահրապարակում ռեզինե մանրահատիկներից 1սմ հաստ. ռեզինե ծածկույթի իրականացում փոռվի տարբերակով (ծածկույթի պատրաստում ռեզինե փշրանքից սոսնձով կանաչ և կարմիր գույնի) Устройство резинового покрытия игровой площадки толщ.1см (из	քմ	75	47,38	3 553,49

	клеевой резиновой крошки зеленого и красного цвета)				
37	Մետաղական ցանկապատ Металлическая ограда (ограждение из секций) -133.5 м / 1.86 - 72 секц.				
38	Գրունտի մշակում ձեռքով 4 կարգ գռ. Разработка грунта 4 гр. вручную	խմ/куб.м	5	5,25	26,25
39	Նախապատրաստական շերտերի պատրաստում խճից Щебеночная подготовка толщ.100мм	խմ/куб.м	0,3	16,71	5,01
40	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում Заливка ям бетоном М-150	խմ/куб.м	1,15	45,89	52,77
41	Մետաղական ցանկապատի (բազրիքներից) տեղադրում Установка секций ограждения (из металлических перил h-940мм)	մ/м	133,5	11,50	1 535,47
42	Մետաղական էլեմենտների ներկում յուղային ներկով 2 անգամ Окраска металлических элементов ограды масляной краской 2 раза	տ/т	1,6	44,46	71,13
43	Մետաղական ցանկապատ Металлическая ограда (ограждение из секций) - 217 м / 2.0 - 110 секц.секц.				
44	Գրունտի մշակում ձեռքով 4 կարգ գռ. Разработка грунта 4 гр. вручную	խմ/куб.м	6,2	5,25	32,55
45	Նախապատրաստական շերտերի պատրաստում խճից Щебеночная подготовка толщ.100мм	խմ/куб.м	0,44	16,71	7,35
46	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում Заливка ям бетоном М-150	խմ/куб.м	1,32	45,89	60,57
47	Մետաղական ցանկապատի (բազրիքներից) տեղադրում Установка секций ограждения (из металлических перил h-500мм)	մ/м	217	9,18	1 992,47
48	Մետաղական էլեմենտների ներկում յուղային ներկով 2 անգամ Окраска металлических элементов ограды масляной краской 2 раза	տ/т	1,8	44,46	80,03
49	Նոր զրուցատաղավարի տեղադրում Установка новой беседки, столика и скамейки				
50	Գրունտի մշակում ձեռքով 4 կարգ գռ. Разработка грунта 4 гр. вручную (1.73+0.56)	խմ/куб.м	2,3	5,25	12,08
51	Գրունտի խտացում խիճով Уплотнение грунта щебнем (0.072+0.048)/0.1	քմ/кв.м	1,2	0,35	0,41

52	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում Заливка ям бетоном М-150 (0.36+0.096)	խմ/куб.м	0,46	45,89	21,11
53	Կանգակների մոնտաժ 60x60x3մմ քառակուսի խողովակներից Монтаж стоек из стальных труб 60x60x3мм с к-1.25 на изготовление (93+84)	տ/т	0,177	1 019,90	180,52
54	Կանգակների մոնտաժ 40x40x3մմ քառակուսի խողովակներից Монтаж стоек из стальных труб 40x40x3мм с к-1.25 на изготовление (93.13+69.4 - скамейки)	տ/т	0,163	1 089,17	177,53
55	Բազրիկների և ճաղաշարի մոնտաժ 20x20x2մմ քառակուսի խողովակներից Монтаж перил и ограждения из стальных труб 20x20x2мм с к-1.25 на изготовление	տ/т	0,08	1 221,41	97,71
56	Բետոնի մարմնում մնացող պողպատե կառուցատարրերի տեղադրում Стальные конструкции остающиеся в теле бетона (18.3+5.15)	տ/т	0,024	3 004,83	72,12
57	Մետաղական էլեմենտների ներկում յուղային ներկով 2 անգամ Окраска металлических элементов беседки масляной краской 2 раза (0.177+0.163+0.08)	տ/т	0,42	44,46	18,67
58	Նստարանների փայթե չորսուների երկշերտ լաքապատում Покрытие деревянных брусков скамейки лаком в 2 слоя	քմ/кв.м	14	1,82	25,51
59	Տանիքի ծածկույթի զրուցատաղավարի պատրաստում ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից 0.55մմ հաստ. Устройство перекрытия беседки оцинкованной гофрированной сталью	քմ/кв.м	11	8,19	90,10
60	Գրունտի բեռնում ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ Погрузка грунта на а/с	տ/т	37	0,81	29,88
61	Գրունտի տեղափոխում մինչև 5կմ Отвозка грунта на расстояние 5 км (18.9*1.95)	տ/т	37	2,24	83,00
62	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպարտով տեղափոխման ժամանկ 2-3 կարգ գրունտ Работа на отвале	խմ/куб.м	19	0,06	1,13
63	Ետլիցք ձեռքով 3 կարգ գրունտներում Обратная засыпка вручную	խմ/куб.м	22	1,52	33,46
64	Աիբամանների տեղադրում Установка мусорных баков (9 шт.)				
65	Գրունտի մշակում ձեռքով 4 կարգ գռ. Разработка грунта 4 гр. вручную	խմ/куб.м	1,8	5,25	9,45

66	Նախապատրաստական շերտերի պատրաստում խճից Щебеночная подготовка толщ.100мм	խմ/куб.м	0,36	16,71	6,02
67	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում Заливка ям бетоном М-150	խմ/куб.м	1,62	45,89	74,34
68	Մետաղական ահբամանների տեղադրում Установка мусорных баков	տ/т	0,12	1 134,84	136,18
69	Մետաղական էլեմենտների ներկում յուղային ներկով 2 անգամ Окраска металлических элементов масляной краской 2 раза	քմ/кв.м	12	1,54	18,53
70	Գրունտի բեռնում ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ Погрузка грунта на а/с	տ/т	3,51	0,81	2,83
71	Գրունտի տեղափոխում մինչև 5կմ Отвозка грунта на расстояние 5 км (1.8*1.95)	տ/т	3,51	2,24	7,87
72	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպարտով տեղափոխման ժամանկ 2-3 կարգ գրունտ Работа на отвале	խմ/куб.м	2	0,06	0,12
73	Նստարանների տեղադրում Установка скамеек (11 шт.)				
74	Գրունտի մշակում ձեռքով 4 կարգ գռ. Разработка грунта 4 гр. вручную	խմ/куб.м	1,3	5,25	6,83
75	Նախապատրաստական շերտերի պատրաստում խճից Щебеночная подготовка толщ.100мм	խմ/куб.м	0,22	16,71	3,68
76	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում Заливка ям бетоном М-150	խմ/куб.м	1,1	45,89	50,48
77	Նստարանների տեղադրում Установка металлических скамеек	տ/т	0,32	1 083,30	346,66
78	Մետաղական էլեմենտների ներկում յուղային ներկով 2 անգամ Окраска металлических элементов скамеек масляной краской 2 раза	տ/т	0,32	44,46	14,23
79	Նստարանների վրա չորսուների տեղադրում Установка деревянных брусков на скамейки	խմ/куб.м	0,51	255,09	130,10
80	Նստարանների փայթե չորսուների երկշերտ լաքապատում Покрытие деревянных брусков скамейки лаком в 2 слоя	քմ/кв.м	51,7	0,72	37,16
81	Գրունտի բեռնում ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ Погрузка грунта на а/с	տ/т	2,54	0,81	2,05

82	Գրունտի տեղափոխում մինչև 5կմ Отвозка грунта на расстояние 5 км (1.3*1.95)	տ/т	2,54	2,24	5,70
83	Հողային աշխատանքների կատարում թափոնակույտում, ավտոտրանսպարտով տեղափոխման ժամանկ 2-3 կարգ գրունտ Работа на отвале	խմ/куб.м	1	0,06	0,06
84	Մետաղական դռների ներկում յուղային ներկով 2 անգամ Окраска металлических дверей масляной краской 2 раза	քմ/кв.м	23	1,54	35,51
	ԸՆԴԱՄԵՆԸ ИТОГО				36 187,36
	Ա.Ա.Հ. 20% НДС				7237,47
	Ընդամենը Всего				***43 424,83***

Կապալառուն պետք է ունենա հրավերով նախատեսված աշխատանքի կատարման օրենսդրությամբ նախատեսված իրավասություն (<<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքով նախատեսված լիցենզիաներ և ներդիրներ), ինչպես նաև պետք է բավարարի նախագծով աշխատանքային ռեսուրսների և մեքենա-մեխանիզմների համար սահմանված նվազագույն պահանջներին (եթե այդպիսիք նախատեսված են):

Կապալառուն պետք է ունենա շինարարության իրականացման 1-ին կամ 2-րդ դասի լիցենզիա՝ հետևյալ ներդիրներով.

- **Բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ (03.04)՝ 1-ին կամ 2-րդ կարգի ներդիր, հավաստագիր:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Ֆոլկ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Ազատության 24/15
Բանկը Ֆասթ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2621977680191001
ՀՎՀՀ՝ 08253974

Գլխ.տնօրեն՝ ----------Գ.Սմոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Կոմիտաս 5
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011379500100
ՀՎՀՀ 00200833

Տնօրեն՝----------Ա.Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Պարոնյան 21/4
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011554730100
ՀՎՀՀ 02917998

Տնօրեն՝----------Հ.Բանդուրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
« 18 » փետրվարի 2026թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/3 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Մասիս քաղաքի Նոր թաղամաս թիվ 9 շենքի բակի բարեկարգման աշխատանքների կատարման

Հ/Հ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտ
1	Մասիս քաղաքի Նոր թաղամաս թիվ 9 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրը	Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 70 օրացուցային օր

Ավարտված շինարարական օբյեկտի չափագրման անհրաժեշտության առաջացման դեպքում այն կատարվելու է Կապալառու ընկերության կողմից և վերջինիս միջոցներով՝ ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, Պատվիրատուի կողմից սահմանվող ողջամիտ ժամկետում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ֆոլկ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Ազատության 24/15
Բանկը Ֆասթ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2621977680191001
ՀՎՀՀ՝ 08253974

Գլխ. տնօրեն՝ ---------- Գ. Սնոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Կոմիտաս 5
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011379500100
ՀՎՀՀ 00200833

Տնօրեն՝ ---------- Ա. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Պարոնյան 21/4
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011554730100
ՀՎՀՀ 02917998

Տնօրեն՝ ---------- Հ. Բանդուրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
« 18 » փետրվարի 2026թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/502	Մասիս քաղաքի Նոր թաղամաս թիվ 9 շենքի բակի բարեկարգման աշխատանքներ		... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Մասիսի համայնքապետարան
ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900 432 450 030
ՀՎՀՀ 04240324

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ֆոլկ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Ազատության 24/15
Բանկը Ֆասթ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2621977680191001
ՀՎՀՀ՝ 08253974

Գլխ. տնօրեն՝ ----------Գ. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Կոմիտաս 5
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011379500100
ՀՎՀՀ 00200833

Տնօրեն՝ ----------Ա.Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Պարոնյան 21/4
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011554730100
ՀՎՀՀ 02917998

Տնօրեն՝----------Հ. Բանդուրյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 6
« 13 » փետրվարի 2026թ. կնքված
ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/3 ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԱՍՏՈՒՄ

հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին

<<Ֆոլկ>> ՍՊԸ-ն, <<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն և <<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ-ն հավաստում են, որ ԱՄՄՀ-ԳՀԱՇՁԲ-26/3 ծածկագրով գնման պայմանագով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում պարտավորվում են տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով Պատվիրատուի հետ:

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Ֆոլկ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Ազատության 24/15
Բանկը Ֆասթ Բանկ ՓԲԸ
Հ/Հ՝ 2621977680191001
ՀՎՀՀ՝ 08253974

Գլխ. տնօրեն՝ ----------Գ. Մևոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ԼԵԳԵՆԴ ՔՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Կոմիտաս 5
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011379500100
ՀՎՀՀ 00200833

Տնօրեն՝ ----------Ա. Սարգսյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<Ուրբան դեվելոփմենթ>> ՍՊԸ
Հասցեն ք. Երևան, Պարոնյան 21/4
Բանկը Արմսվիսբանկ ՓԲԸ
Հ/Հ 2500011554730100
ՀՎՀՀ 02917998

Տնօրեն՝ ----------Հ. Բանդուրյան
/ստորագրություն/
Կ.Տ